ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

20.07.2021թ. ԿՆՔՎԱԾ N «ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏ-ԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ և ԱՍՖԱԼՏ-ԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գ.Կարբի 17 Սեպտեմբերի 2021թ.

«Կարբի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Կ.Բաղդասարյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինպլյուս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ.Նազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 20.07.2021թ. կնքված N «ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.5 և 8.8 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 **Հիմք ընդունելով «Շինպլյուս» ՍՊԸ-ի կողմից 14.09.2021թ-ի գրությունը «ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով Պայմանագրի կատարման վերջնաժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և կատարման վերջնաժամկետ սահմանել 2021թ. Հոկտեմբերի 21-ը ներառյալ:**

2. Այլ պայմաններ

2.1. **20.07.2021թ.** կնքված N «ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով **Կարբի համայնքի փողոցների ասֆալտ-բետոնե ծածկույթի իրականացում և ասֆալտ-բետոնե ծածկույթի կապիտալ վերանորոգման աշխատանքների** ձեռքբերման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կարբիի համայնքապետարան **ՀՀ Արագածոտն մարզ գ.Կարբի 3-րդ փողոց շենք 1** **ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** **Հ/Հ 900442124047** **ՀՎՀՀ 05001747** **Կարբի համայնքի ղեկավար** **Կ.Բաղդասարյան** /ստորագրություն/ Կ.Տ	**«Շինպլյուս» ՍՊԸ** **ՀՀ ք.Երևան, Աշտարակի խճ 47/18** **Ամերիաբանկ ՓԲԸ** **Հ/Հ 157005894100100** **ՀՎՀՀ 00891777** **տնօրեն Տ.Նազարյան** /ստորագրություն/ Կ.Տ